

Կիրիգամիով ամենահասարակ բացիկները

պատրաստված տարածական


Այս դասի նպատակն է հասարակ օրինակների վրա ցույց տալ կիրիգամիով պատրաստված տարածական բացիկների կտրատման հիմնական սրբությունները:

Տոնածառով բացիկ


1. Վերցնենք ալբոմի թուղթ և բաժանենք այն երկու մասի: Մենք աշխատելու ենք ալբոմի թղթի կեսով (A5 ձևաչափ):
2. Ծալենք թուղթը հավասար մասերի: Ծալքի հատվածում (դրսի կողմից) նկարենք տոնածառ (ավելի ճիշտ տոնածառի կեսը), ինչպես պատկերված է նկարում:

3. Վերցնենք մկրատը և կտրենք տոնածառը, բայց պետք է չկտրել այն հատվածը, որը նկարի մեջ վերցված է կարմիր շրջանակի մեջ (սա շատ կարևոր է): Այդպիսով, տոնածառն ամբողջությամբ չի առանձնանա բացիկից:

4. Բացեք բացիկը և ուղղեք այն: Պատրաստի բացիկը պետք է կիսով չափ բացվի: Տոնածառը դեպի դուրս հանեք: Տարածական բացիկը պատրաստ է:



5. Այժմ կարելի է բացիկը զարդարել ըստ ճաշակի: Օրինակ կարելի է բացիկի երեսին կանաչ թուղթ փակցնել (տոնածառը այդ փակցվող թղթին պետք չէ սոսնձել, այն պետք է դեպի նայողը դուրս մղված լինի):



Կարելի է նաև տոնածառը ներկել ֆլումաստերով կամ ներկերով ու զարդարել այն թղթերից կտրատված զարդերով՝ խաղալիքներով, աստղիկներով, ժապավեններով և այլն:



Սրտիկով բացիկ

1. Վերցնենք ալբոմի թղթի երկրորդ կտորը, ծալենք այն և վրան նկարենք սրտիկի կես, ինչպես տոնածառով բացիկի դեպքում:



2. Կտրենք սրտիկը, բայց ոչ ամբողջովին: Նկարում նշված հատվածը պետք է չկտրվի:

3. Բացված բացիկն այս տեսքը պետք է ունենա:



4. Սրտիկը կարելի է ներկել կարմիր գույնով.



5. Բացիկը կարելի է զարդարել, վրան էլի մի քանի փոքր սրտիկներ նկարելով: Այդ սրտիկները կտրատվում են պատկերի կեսը կտրելու սկզբունքով՝ նկարվում է սրտիկը, կտրվում նրա կեսը և կտրված կեսը դուրս մղվում: Այս մեթոդը բացիկն ավելի տարածական տեսք կտա:

Այդպիսի նուրբ կտրվածքները մկրատով գրեթե անհնար է անել: Դրանց համար օգտագործվում է գրասենյակային դանակը.



Պարզապես պետք է հիշել, որ նման դանակով սեղանի մակերեսի վրա կտրվածքներ անել չի կարելի: Այն կփչացնի սեղանի մակերեսը: Բացիկի տակ կարելի է դնել օրինակ տախտակ:
Արդյունքը մոտավորապես այսպիսին պետք է լինի.



Նման մեթոդով կարելի է պատրաստել բացիկներ ծաղիկներով, ծառով, մարդուկով, ձնեմարդով և այլն: